

ԺԴ. Հայոց քաղաքներն և Ռեակտ-	
րակքն ի վեներիկ	381
ԺԵ. Հայ Սանսերք ի վեներիկ	392
ԺԶ. Յիշատակք ԺԶ Դարոս Հայ-	
վեներաց	427
ԺԷ. Ա. Քանի մի Ուղղաբիւնք. —	
Բ. Լրմանք կենսագրութեանց . — Գ.	

Տոսնն Հայոց. — Դ. Ազգաստանք Հայ-	
ոց ի վեներիկ. — Կ. Յետահայեաց	
ակնարկ մի ի Հայ-վեներաց Գ Յերս-	
նակի	477
	Հ. Ղ. Մ. Ա.

Կ Ա Մ Ե Ն Ի Ց



Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք Յ Ա Յ Ո Ց

Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն Ի Ե Ի Ռ Ո Ւ Մ Ե Ն Ի Ռ Ց

Հ Ա Ւ Ա Ս Տ Չ Ե Ա Ս Թ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ Ո Վ Ք

Գ Ի Տ Ե Լ Ի Ք



Գառաջարանի գրոցս՝ երբ սկսաւ հրատարակուիլ ի Քաղմալի-
 ցի (1895 տարւոյ), յայտնած էինք, թէ միայն կամենից քաղաքի
 Հայերէն Տարեգրութիւնն ի լոյս կ'ընծայեմք. յորում՝ Լեհաստանի ու-
 յորիչ քաղաքաց և Ռումենիոյ կողմանց տեղեկութիւնք կան. իսկ թա-
 թարերէն կամ թուրքարէն շարունակութիւնը՝ քաղելով և թարգմանելով
 խոստանայինք: Սակայն, յետոյ լաւ համարուեցաւ՝ ոչ միայն այդ սյլազգերէն
 գրուածն այլ հրատարակել, (յորում շատ կարեւոր գիտելիք կան Լեհաց պատ-
 մութեան), այլ և զանազան Յանչոսածք՝ իրրեւ. Հաւաստչեայք՝ Լեհահայոց
 վերաբերեալք, մանաւանդ Լովացոց (Լեմպերկ քաղաքի), ուր նստի Հայոց
 արքեպիսկոպոսն: — Այս Յանչուածոց Ա և Բն՝ (եր. 115-23). դարձեալ
 Թաթարերէն ժամանակագրութիւնք են. իսկ հետեւեալքն են,

- Գ. Քանի մի հատուածք ի գրչադիր օրինակէ Աւաքէլ Պատմագրի. (եր. 124-5).
- Դ. Յովնանեան Վարդան արքեպիսկոպոսի առ Եւզոպիացիս գրած թղթէն քաղուածք (եր. 126-7).
- Ե. Եկեղեցական տարեգրութիւն մի (1688-98) տարիներու, (եր. 129-30).
- Զ. Քաղուածք Մտեփանեան կամ Ռոչքեան Մտեփանոս Հմուտ վարդապետի կամենիցոյ աւագերիցու՝ ընդարձակ Տարեգրութեանն, (եր. 131-46):

Է. Բաղտասարեան Տէր Յակովբայ Օրագրութիւն մի, 1704 տարւոյ սեպտեմբեր ամսոյն, Շուետաց ի Լեհաստան արշաւանաց ատեն՝ իրեն հանդիպածին. (եր. 147-59):

Ը. Քաղուածք ի Յիշատակարանաց Ձեռագրոց (եր. 160-201), Լեհահայոց նկատմամբ, թէ՛ մեր քով գտուած և թէ՛ մեզի ծանօթ իբր հարիւր Ձեռագրոց ժողոված, որոց մեծագոյն մասն ի Լեհաստան գրուած. շեմք տարակուսիր որ նոյնչափ և գուցէ աւելի եւս գտուին այսպիսի Յիշատակարաններով Ձեռագիրք, յայլեւայլ կողմեր. որոց հաւաքումն կըրնայ նոր ծանօթութիւններ ընծայել՝ Լեհահայոց գաղթականութեան գիտելիքն ամբողջացնել ուզողին, որ չէր մեր նպատակն, այլ ամփոփել ուր որ ձեռնհաս էինք, և ինչ որ չէր հրատարակուած ի Ճանապարհագրութեան Բժշկեան Հ. Մինասայ. ուր, ինչպէս քանի մ'անգամ յիշած եմք, կարեւոր գրուածոց հետ կան և քանի մի Ձեռագրաց յիշատակարանք:

Թ. Վիպասանութիւն Նիկողական, (եր. 202-14). զուցէ մեր հրատարակած Յաւելուածոց մէջ՝ սա ամենէն հետաքննականն ըլլայ՝ ոմանց, և փափազելի՝ գրուածին սկզբան և վերջին պակաս մասերը գտնելու: Տես և ըսածնիս ի ծանօթութեան, եր. 202:

Ժ. Կոնդակք Կաթողիկոսաց առ Լեհահայս (եր. 215-65). անուշտ շատոց այլ՝ այս Յաւելուածս աւելի յարգի է. 300 տարիներում (1365-1672) մեր կաթողիկոսաց իշխանութիւնն և խնամքը, միանգամայն և կոնդակագրութեան ոճը յայտնողք: Կոնդակաց առաջինն և երկրորդն՝ ի սկզբան գրոցս հրատարակուած են, երբ չէինք մտադրած այս Յաւելուածս ները հաւաքել. վասն որոյ Ք. Թուէն սկսի այս տեղ հաւաքած շարքն՝ մինչև ց'ԺԸ. որոց մէջ կայ և Թուղթ մի (Ը) Աստուածատրոյ պատրիարքի Կ. Պօլսի առ Լեհահայս. Թուղթ մի եւս (Է) Լովացւոց առ Միքայէլ կաթողիկոս, յորմէ խնդրեն իրենց սակաւաթիւ ընտանեաց համար՝ տնօրինումն մերձաւոր ամուսնութեանց: Ինչպէս ձեռագիր յիշատակարանաց համար ըսինք, այսպէս և անուշտ զեռ ուրիշ Կոնդակք և փոխադարձ թղթակցութիւնք եղած են Կաթողիկոսաց և Լեհահայոց, որոց զոնէ ոմանց պատճէնը խնդրելու է յԷջմիածին: Մեր հրատարակելոց կէսն (ինն) Նիկողի խնդրոյն վրայօք է. բովանդակն այս է ժամանակի կարգաւ.

- Ա. 1365, յանուար. Մեսրոպ կաթող. առ Լեհահայս.
- Բ. 1375, յան. 15. Կոստանդին կաթող. »
- Գ. 1384, ապրիլ 2. Թէոդորոս » »
- Դ. 1390, օգոստ. 18. Նոյն » »
- Ե. 1390, յունիս 28. Յակովբ Գ. » »
- Զ. 1457-60 Արիստակէս » »
- Է. 1572, ապրիլ 15. Թուղթ Հայոց Լովի առ Միքայէլ կաթող.
- Ը. 1589, նոյեմբ. 8. Թուղթ Աստուածատրոյ պատրիարքի վասն Մուպասակին.
- Թ. 1611, մայիս 1. Մելքիսեդ կաթող. առ Լեհահայս.
- Ժ. 1633, օգոս. 30. Մովսէս կթ. առ Վլաստիսլաւ Թգ. Լեհաց.

- ԺԱ. 1640, հոկտ. 12. Փելլիպպոս կթղ. առ Լեհահայս
 ԺԲ. 1644, յուլ. 27. Նոյն առ Վլադիսլաւ Թագաւոր.
 ԺԳ. 1653, նոյեմբ. 5. Նոյն առ Լեհահայս. »
 ԺԴ. 1654, փետր. 12. Նոյն առ Լեհահայս Թագաւոր
 ԺԵ. — ապրիլ 15. Նոյն » »
 ԺԶ. 1662, յանու. 12. Յակովբ Դ կթղ. »
 ԺԷ. 1671, սեպտ. 1. Նոյն » »
 ԺԸ. 1672, օգոստ. 28. Նոյն » »

Նիկոլէն առաջ գրուած կոնդակք՝ իրմէ առաջ եղած եպիսկոպոսաց հաստատութեան վկայականք են. ասոնց առաջին օրինաւոր ճանչցուածն՝ ըստ կոնդակի Մեսրովպայ կաթողիկոսի՝ իր ձեռնադրած Գրիգորն է, որ յաջորդ Համանուններէն որոշուելով՝ կոչուի Առաջին կամ Մեծ (Ոչոռ Գրիգոր). զոր Կոստանդին կաթողիկոս եւս Հաստատած է յամի 1375, Զարմանք է որ բազմակմուս ժամանակագիրն Ստեփ. Ռոշքայ և Հետեւողքն՝ առաջին եպիսկոպոս դնեն զՅովհաննէս. Թերեւս զԳրիգոր՝ իրբեւ յետոյ մերժուած ի Կոստանդնէ՝ անարժան Համարելով, եթէ Նոյն և ոչ Բ. Գրիգոր մ'է, զոր Թէոդորոս կաթող իր երկրորդ կոնդակով դատապարտէ (տ. եր. 10-1), զի իր և իր նախորդաց ատեն « բազում անսահման բաներ գործեաց ». այս գործոց ստորջ պատմութիւնն և վախճանը կ'արժէր զիտնալ: Մենք այն Մեծ Գրիգորէն մինչև ի մեր ժամանակիս եպիսկոպոսաց՝ կամ լաւ եւս արքեպիսկոպոսաց՝ շարքը նշանակեմք. յիշեցընելով, որ ասոնց յաջորդութիւնն և թուականք՝ դեռ կարօտին քննութեան և ստուգութեան, որովհետեւ չեն միարանիր ժամանակագրաց, դաւադրանագրաց և յիշատակարանաց ամէն աւանդութիւնք:

- 1365 Գրիգոր Ա.
 1379 Յովհաննէս
 1409 Գրիգոր Բ, եղբայր Յովհաննու
 1415 Ա.եռիք, եղբորորդի Գրիգորի և Յովհաննու
 1463 Խաչատուր † 1502 (եր. 116-7)
 1481 Ստեփանոս † 1492 (եր. 135)
 1515 Գալուստ, ըստ Լեհաց՝ Քիլիանոս † 1549
 1545 (Նիկոլ երէց տեղապահ)
 1552 Գրիգոր Գ. Վարազեցի կամ Վանեցի † 1574 (եր. 46)
 1578 Պարոսմ Տրապիզոնեցի
 1589 Յովհաննէս Բ կամ Գալուստ (եր. 136. 169. 231)
 1607 Կարապետ կամ Գարրիէլ † 1608 (եր. 66)
 1611 Մեսրովպ կաֆացի † 1625
 1626 Նիկոլ Թորոսովիչ † 1685
 1668 (Յովհաննէս Քարիմատեանց տեղապահ) † 1678
 1681 Վարդան Յոջեանեան † 1715
 1698 (Աստուածատուր Ներսիսեփիչ, փոխանորդ)
 1716 Յովհ. Տուրիա Ավուստինովիչ † 1751
 1752 Յակովբ Ավուստինովիչ † 1783

- 1783 Բակովբ Թումանովիչ † 1798
- 1799 Յովհաննէս Սիմոնովիչ † 1816
- 1817 Գայետան Վարդերեսովիչ † 1831
- 1831 Սամուէլ Ստեփանովիչ † 1858
- 1858 Գրիգոր Սիմոնովիչ † 1875
- 1876 Գրիգոր Յովսէփ Ռոմաշեան † 1881
- 1882 Սահակ Նիկողայոս Իսաքովիչ

Թէ՛ մեր այս գրոց և թէ ուրիշ յիշատակը՝ յայտնեն, որ զատ յարքեպիսկոպոսէն Լեւոնդրիկ՝ եղած են երբեմն ի Լեհս, ի Ռումինիա և ի սահմանակից նահանգս, ուրիշ հայ եպիսկոպոսք եւս, կամ անոր հպատակք կամ ինքնագլուխք, գուցէ և ըստ բանից Մետրովայ կաթողիկոսի (եր. 6) առանց հրամանի կաթողիկոսին և ոչ ոռդակի: Այս կարեւոր խնդրոյ զնուութիւնը թողով, ոչ անկարեւոր համարիմ՝ այս տեղ նշանակել՝ քանի մի տեղեաց մեզ ծանօթ եպիսկոպոսներ: Ասոնց գլխաւորն է Մոլտաւիա, Պուղտան կամ Սեչով կոչմամբ. յիշուած եպիսկոպոսքն, յամս՝ 1551, Յովհաննէս Սեչովցի. 1578-1607, Յովհաննէս Պոստանցի. 1628, Ղազար Բարերոցի. 1640, Անդրեաս. 1662 † 1678 Յովհաննէս Քարիմատենց. 16.. Սահակ, ձեռնադրուած ի Դ Բակովբայ կաթողիկոսէ. 1680, Միևսա Չիլիֆտար:

Ի կամմինց. 1577, Յովհաննէս Աւագերէց, զոր հաստատէ հօն անձամբ՝ Թագէտս կաթողիկոս. 1627, Թորոս եպիսկոպոս, ձեռնադրուած ի Մելքիսեդ կաթողիկոսէ: — Ի Եպարովից յիշուի (եր. 191) 1655, Անտոն եպիսկոպոս: — Ի Սերաղ. 1507, Սիմոն եպիսկոպոս (եր. 161): — Ի Մոլիլեւ, ի սկիզբն դարուս (1809), կայր Յովսէփ եպիսկոպոս Քրիստոֆորովիչ † 1816. որոյ փոխանորդ կ'ըլլայ, 1816, կանոնիկոսն Անտոն Վարդերեսովիչ:

Բայց քան զասոնք և քան զԼովի արքեպիսկոպոստուն իսկ՝ Հնագոյն, որով և Հետաքննազոյն է Ունգարիոյ կողմանց Հայ եպիսկոպոսն, ԺԴ դարու կիսէն առաջ, յամին 1343, Մարտիրոս եպիսկոպոս Հայոց ի Յովմաք կամ Տոլմաք քաղաքի, Կրանի (և ըստ գրոց Սարիզոնիոնի) մետրապօլտին օժանդակ. այս եպիսկոպոսին կնիքն այլ գտուած է լատին դրութեամբ, Martini Episcopi Armenorum de Tolmachy, (Կնիք Մարտիրոսի եպիսկոպոսի Հայոց Տոլմաքայ): Նոյն քաղաքին՝ Հայ եպիսկոպոսն յիշուի և յամի 1355, հաւանօրէն նոյն Մարտիրոսն: Յետ երեք և կէս դարուց՝ Վարդան Յովնանեան կ'իմացընէ մեզ (եր. 129. 199), որ յամի 1691 ձեռնադրեր է զՕգոսենս Վերծերեսոյր կամ Վօծրեսոզ Պօշանցի՝ եպիսկոպոս Հայոց յԱլատին:

Մեր վերոյիշեալ Լեհահայոց Վամանակագիրք՝ աւելի իրենց եկեղեցւոյ և եկեղեցականաց վրայօք դրած են՝ քան քաղաքական կետաց, և անոնց գլխաւորն՝ կամենիցայ աւագերէցն Յովհաննէս՝ թուի թէ մասնաւոր նկատմամբ չէ ուզած իմացընել՝ Մոլտաւաց քանի մի Վոյվոսայից հայ ըլլալը, մանաւանդ այն Անգոնք կամ Անատր անուանեալ Յովհաննու, զոր ըստ սո-

1. Իր որդւոյն՝ Ազնետի Թաթարէն դրածին մէջ այլ կան մօտր յիշատակք ազգայինց, որոց մէջ Եշանաւոր և Վիգոսանական զէպք մ'է 1616, մարտի 28ին, Հայ աղջկան մի բրածը կախուելու տարուց զասազարակելոյն (գուցէ սիրականին) ցանկարծ զէմ՝ զալով, և թիւնն քաշելով տանիւն և մէկ տեղ քաղաքն զուրս փախելն, (եր. 77):

վորութեան իւռն կոչին. որ թէ և ի մօրէ միայն հայ էր, բայց օտար պատմիչք յատկապէս Հայ մականուանեն զնա, ինչպէս և Ահաւոր, իր քաղութեանց և անխնայ վրիժառութեանց համար, որովք Ռուսներոյ քաղաքական պատմութեան մէջ՝ ամենէն անուանի անձանց մէկն համարուի, և միայն մատնութեամբ վատ մարդկան՝ զրկուեր է իր եռամեայ իշխանութենէն և ի կենաց. մեր Աւագերէցն յիշէ զայս՝ կարճ բայց լաւ ոճով, (յերես 44-5), սպանման օրն այլ նշանակելով՝ ի 20 մարտի, 1575, ըստ այլոց 1574: Ասոր եղբարք համամարք և բնիկ հայ հօր Սերբեկայի որդիք՝ Կարապետ կամ իսնն, Կոստանդին և Աղեքսանդր և սորա որդին Պետրոս եւս, ջանացեալ և կարճ աւտեն գրուեր են վոյվոտական գահը, հայածելով ՎՊոլտաւ յափշտակոցս. վերջի յիշեալ իշխող Պետրոսի բռնուելու ատեն՝ Մշաօ անուամբ Հայն այլ բռնուեր և փախեր է, և այլն. (ա. եր. 59): Ռուսներաց պատմութեան մէջ սղա՝ Բողոքովա կոչուին, որ Պայտ (նաչ) նշանակէ: Իրենց լեզուաւ, և համարին թէ Թարգմանութիւն ըլլայ հայ Սերբեկա անուան կամ բառի, որ մեզ անծանօթ է: Յիշէ և իւռնի վոյվոտայութիւնը՝ յամի 1577-8, և զլիսատուին ի Լեհաց, (եր. 48-9.) և միւս եղբայրը, որ՝ յետ երկուց շաբաթուց «պարոն մտաւ ի յերկիրն՝ Խազախներովն, զոր ոմանք ասացին, եթէ այդ Բողոքովային եղբայրն է», և այլն, (եր. 49): Տասն տարի առաջ Պր. Գր. Պլըզդզեան՝ Հանդէս ամսօրեայ օրագրի մէջ (Թ հտ. եր. 101-3.) այս Սերբեկեան Հայ վոյվոտայից վրայօք տեղեկութիւն զրած է. աւելի ընդարձակ՝ Ռուսներաց պատմիչք, մանաւանդ Հոչակաւորն Հաշտեռ. և այս տարի (1896), զատ առլի գրածնեբէն՝ Քսենոփոլ, ընդարձակ երկհատոր Ռուսներաց պատմութեան մէջ²: Այս կարեւոր զիբքս՝ շնորհիւ յիշեալ Պ. Գրիգորի հասաւ առ մեզ՝ նոր մամլէ ելած, բայց մեր այս գրոցս այլ տպագրութենէն վերլը, որով չկարցանք ըստ ժամանակին օգտուիլ և ծանօթաբանել: Սա՝ մեր ժամանակագրին պախարակած Տեսրոթը (եր. 19-28) աւելի արժանաւոր անձ մի ցուցընէ, որ և գրաւոր յիշատակ մի թողած է, Փռանկաց Ե Կարոլոսի պատերազմաց Պատմութիւնն, որ և տպագրուեր է: Բայց նկատմամբ մեր ազգի՝ քիչ փետելիք կայ Քսենոփոլի այս գրոցս մէջ. ամենէն մեծ դիպուածը՝ Հայոց հայածանաքն և վիշտքն Նոնօֆանէ, տողով մի միայն յիշէ ի կարգի պատմութեան, բայց ի ներաքն ի ծանօթութեան կ'աւելցընէ, թէ այս հայածանաց ողբ մի գրուած է Հայերէն (Մինասայ Թոխադցոյն) և հրատարակուած ի Հանդէս ամսօրեայ օրագրի: Քաղաքական օրինաց և իրաւանց վրայ խօսելով, կու յիշեցընէ (Թ հտ. եր. 42. 439), որ առաջ Հրէից և Հայոց արգելուած էր երկիր զնել, այլ միայն սուռն և այգի. ապօրինութեանց վրայօք այլ խօսելով՝ կու յիշէ, որ անցեալ դարուն վերջերը՝ Միքայել Սուցոյ վոյվոտայն՝ Աբիկզատն Խօճայ Պօղոս Հայէ մի 30,000 դահկան (ղուրուշ) փոխ կ'առնու, գրաւ զնելով զեղի մի եկեղեցին, և երբ չի կըրնայր վճարել, պարսկատէրն կ'ուզէ զեկեղեցին վաճառել. բայց բարեպաշտ անձ մի (Աղ. Մորուզի) ստակը տալով՝ կ'ատէ զեկեղեցին:

Իսկ նկատմամբ բարոյականի քաղաքական պատմութեան վլաւաց և Մոլ-

1. Գուցէ բառին արմատն «իբ կամ «ար»՝ զբաստուց ասից նշանակութիւն ունենայ, զի ի դերս (կանոնական) զտած եղբ զայս բան, եթէ մին կամ ջրին՝ «սարբէ և սոցի սայ»:
 2. Histoire des Roumains... depuis les origines jusqu'à l'union des Principautés en 1859. par A. D. Xénopol. Paris, 1896.

տոււաց, երբ ներկայացընէ ասոնց ժոյժտայից գրեթէ շարունակ ծանր ծանր կաշառքով առ այլազգիո՞ գիրար տապալելը, իրենց պոչարաց (աւագաց) հետ խտտութեամբ վարուիլը և անգուծ ջարդերը, մեզի դառնալ նայիլ կու տայ մեր ազգային պատմութեան անցից՝ յորում՝ գիտեմք մեր նախնեաց յանցանքները, սակայն՝ բաղդատելով ասոնց ըրածին՝ անհամեմատ կիրթ, բարեբարոյ և հաւատարիմ գտնեմք զՀայն, մեր կարելի անաշառութեամբ իսկ ապա, երբ տեսնեմք մեր աշօք, թէ ինչպէս զէպք և Վանք և պէսպէս տնտեսութիւնք՝ այդպիսի երկու ժողովուրդքը (վրահ և մոլտաւ) միացուցին մէկ Ռուս մեն անուամբ և ինքնավար տէրութեամբ, և ո՞ր մնաց կամ մնայ՝ անոնց գրեթէ զուգանուն Արմէնն; տեսակ մի ափշութիւն պատէ զմեզ այսօր, մինչ այլեայլ տեսակը ափշութեանց պատեն Եւրոպ կամ պակաս թանձրութեամբ, գրեթէ բոլոր բանիմաց կամ անիմաց աշխարհս, գորեւելք և արեւմուտք, զիշխանս և զիշխեցեալս) զտգէտս և զխորագէտս ու և մինչև ցե՛րբ... :

Ժամանակագրութեանց մէջ մեծ մասամբ օտարաց (Վեհաց և այլոց) և մեզի անծանօթաց և ոչ կարեւորաց յիշատակք են, վասն որոյ աւելորդ համարուեցաւ անոնց ամենուն անուանքն այլ ցանկել, այլ ոմանց. իսկ լեզուի կամ բառից օտարութիւնն այլ (թէ լեհի թէ թաթարի), կամ լաւ եւս՝ հաւաքողիս անհմտութիւնն՝ այդ լեզուաց; անշուշտ տեղ տեղ սխալ ընթերցմունք պատճառած է, բաց ի տպագրութեան սովորական սխալներէ, յորոց մէկ քանին նշանակուած են յաջորդ երեսին վրայ :

Ըստ նիւթոյ բանից կամ պատմութեանն՝ այս հրատարակեալ գործս է յատկապէս Տարեգիրք Հայոց լեհաստանի և Ռուսմեկոյ. բայց թէ անուան համառօտութեան համար և թէ բուն տարեգրութեան հեղինակացն կամանիցացի ըլլալուն համար, (որով և այն քաղքին վրայօք մասնաւոր տեղեկութիւնք գրուած են), միանգամայն կոչեցինք զգիրքս՝ ԿԱՄՆԻՏԵ :

30 յուլիս 1896

Հ. Ղ. Մ. Ա.

Ա. Դ. Ա. Պ

Պ Ա Ր Կ Ե Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Կ Ա Մ Բ Ա Ր Ե Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐԱՐԱՅԻ բառոյ Աղաբ կամ Էտէպ՝ նրանակէ ինչ որ սովորաբար ֆաղաքաւարտութիւն կ'ըսենք. բայց այս մեր բառս ուրիշ քաղաքական նշանակութիւն ունի, և աւելի լաւ բացատրութիւնք կան մեր լեզուաւ այդ իմաստին (որ է ըստ ֆռ. (politesse իտ. Creanza). ինչպէս, Բարեկենսութիւն, բարեխրատութիւն, Բարեկիրոսութիւն. լաւ է և Պար-

կեշտութիւնն, որ գործածուած է այս գրութիւն մէջ, բայց և սա ուրիշ իմաստներ ունի. լաւագոյն բռնի մեզ՝ Բարեկարոսութիւն ըսել. որ թէ՛ շարժմանց թէ՛ վարմանց թէ՛ խօսելոս յարմարի. — Գայով գրութեան՝ արարացի վերաբերիւն, որպէս և վերաբան Դ հատուածին և այլեայլ գրութեանց յայտ աւանն թէ յարարերկն բարգմանուած է ի հայ, և վայել-